ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Թեզը ներկայացրել էր Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Արեն աբեղա Շահինյանը՝ «Պատմական ակնարկ Արևագալի ժամերգության մասին ըստ առկա մատենագրական աղբյուրների» թեմայով:

Հանձնաժողովը, որի կազմում էին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը՝ որպես նախագահ, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը և ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, քննելով ներկայացված թեզը, արտոնել էր այն բանավոր պաշտպանության:

Հոգեշնորհ Հայր Սուրբը դեկտեմբերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, վարդապետական տվչության արարողության ժամանակ, ձեռամբ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի, արժանացավ մասնավոր վարդապետության չորս աստիճաններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ